ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2023 թվականի N 692-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 155-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածը և 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 10-ի «Ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 155-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2. Որոշման հավելվածում՝

1) 23-րդ կետում և 51-րդ կետի 6-րդ ենթակետում «մգ/գ» բառը փոխարինել «մգ/սմ^3» բառով.

2) N 1 աղյուսակի «Նորմը» սյունակի «98, 95, 95» թվերը փոխարինել համապատասխանաբար «99, 94, 95» թվերով.

3) լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 13-րդ բաժնով՝

«13. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Ստանդարտի նշագիրը	Ստանդարտի անվանումը
ՀՍՏ 415-2021	Հեղուկներ նիկոտին մատակարարող էլեկտրոնային համակարգերի համար. Ընդհանուր տեխնիկական պայմաններ
ՀՍՏ 428-2022	Հեղուկներ նիկոտին մատակարարող էլեկտրոնային համակարգերի համար. Նիկոտինի, պրոպիլեն գլիկոլի և գլիցերինի պարունակության որոշում նիկոտինի մատակարարման էլեկտրոնային սարքերում օգտագործվող հեղուկներում. Գազաքրոմատագրման մեթոդ

»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 180-րդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

11.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ